Նորա գալուստը։ Մի քանի բոպէից յետոյ հրապարակը լցուեցաւ դրօշակակիր ձիաւորներով և կանաչազարդ կառքերով, որոնց միջից Նորին Ս. Օծութեան կառքը առաջ անցաւ և մօտեցաւ եկեղեցական դասին։ Լուսաբարապետը մատոյց խաչ և գաւազան. նա մտաւ ամպհովանու տակ և թափորը շարժուեց։ Երգեցիկ խումբը սկսեց «Հրաշափառ շարականը», թափորի առջևով գնում էին խաչ—գաւազան կրող երկու վարդապետներ, միաբանութիւնը և ապա խաչ ու խաչվառ կրողների ստուար շարքը. այնուհետև չորս սարկաւագներ խնկարկում էին ամպհովանու տակ համբաքայլ առաջացող Հայրապետին, որի առջևից տանում էին հայրապետական քողը։ Վեհափառի երևալուն պէս եկեղեցու զանգերի ձայնը խլացաւ ժողովրդի «կեցցէներին» ահագին դղրդոցից։ Նորին Ս. Օծութիւնը օրհնում և խաչակնքում էր ժողովրդին մինչև եկեղեցի հասնելը, որտեղ բազմեց իւր համար պատրաստած յատուկ աթոռի վերայ։ Կարդաց «Ուրախ եղէ ես» սաղմոսը. այնուհետև համբուրելով Իշման սեղանի խաչն ու Աւետարանը և օրհնելով ժողովրդին, մեկնեց վեհարան կեցցէների ձայնի տակ։

Այդ օրը Երեկոյեան վանքի դաւթում հրավառութիւն տեղի ունեցաւ, որի ժամանակ երգում էին բազմաթիւ խմբեր, նուագում և պարում էին, և «կեցցէ» կանչում մինչև ուշ գիշեր։

Ի. Ս.

Թագաւոր Կայսրը անցեալ յուլիսի 14-ին ամենաողորմածաբար հրամայել է վերացնել 1897 թուի հոկտեմբերի 30-ին կայացած որոշումը, որով Վահան վարդապետ Տէր Գրիգորեանին արգելուած էր Կովկասի սահմաններում և մայրաքաղաքում ապրելը։ Ցիշեալ Բարձրագոյն կամքն արդէն յայտնուած է տ. Վահան վարդապետին, որն ազատ է այսուհետև Կովկաս վերադառնալու և ապրելու ամենուրեք։

Եկատերինոսլաւ նահանգի Լուգանսկ քաղաքի բնակիչ՝ Նոր-Նախիջևանցի Սարգիս Խաչատրեան Փափազեանն այս օրերս նուիրեց Լուգանսկ քաղաքի հայ Աղօթատան մի մեծ զանգակ, նուիրեց նաև քսան և հինգ ռուբլի երրորդ զանգակ գնելու համար տեղական հայազգիներէ ստորագրութեամբ հաւաքուած գումարի մէջ. իսկ երկրորդ զանգակը նուիրեց տիկին Դշխուհի Գէորգեան Աճէմեան։

Վերոյիշեալ նուիրատուաց խորին շնորհակալութիւն Լուգանսկ քաղաքի հայ Աղօթատան Հոգաբարձութեան կոչմանէ։

Այլ և Տաւրիկեան նահանգի Նողայսկ քաղաքի բնակիչ՝ Նոր-Նախիջևանցի՝ ի նորումս հանգուցեալ ծերունի Յակոբ Պօղոսեան Խոռվաթեան՝ կտակաւ յօգուտ տեղական հայ եկեղեցւոյ Հոգաբարձութեան ուանդած է քառասէն խանութ՝ չորս հազար ռուբլի արժողութեամբ։ Հանգուցեալը տասներկու տարի էլ երեսփոխան եղած է եկեղեցւոյն։

Ուստի, իբրեն այսօրինակ ծառայութեան և նուիրատաց փոխարէն մաղթեմք յամենեցուն Պարգևատուէն ստանալ յօթևանս արդարոց։

Անդամ Հոգաբարձութեանց հայ Աղօթատան Լուգանսկի և եկեղեցւոյն Հայոց Նողայսկ քաղաքի, Սարգիս ա. քահանայ Մաքսիմեան.

Ի 19 օգոստոսի 1905 ամի
Բահմուտ (Եկատերինոսլաւ նահանգի).

Ամերիկայի հայ գաղութը յաճախ իր վրայ խօսել կուտայ։ Ամերիկան իբր գաղթավայր մը մեծ ձգողութիւն մը ունի վերջերս և հայ գաղթային հոսանքը նախամեծարաբար դէպի Նոր Աշխարհը կ՚ուղղուի։ Ցաջողութիւնը սակայն այնքան հեշտ չէ և եկողներէն շատերը յուսախաբ կելլան։ Անոնք միայն կը յաջողին, որոնք յաջողելու հանգամանքներն ունին։ Սոյն պարագայի մէջ որ և է